Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-933-14.06.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի 15-րդ հոդվածի վերջին պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստացած կազմակերպությունները և հաշվառված անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված կազմակերպությունները գրանցում (հաշվառում) ստանալու պահից համարվում են հաշվառված հարկային տեսչությունում:»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 15.1-րդ հոդվածում՝

1) 2-րդ կետը «կազմակերպությունների» բառից հետո լրացնել «և անհատ ձեռնարկատերերի» բառերը.

2) 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝

«Սույն հոդվածով սահմանված եղանակով և ժամկետներում հաշվարկը, հայտարարագիրը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթը հարկային մարմին չներկայացնելն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն:»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 26-րդ հոդվածի առաջին պարբերությունում «չգրանցված» բառից հետո լրացնել «(չհաշվառված)» բառը:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից, բացառությամբ 2-րդ հոդվածի: Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում 1-ին ընթերցման ժամանակ ներկայացված առաջարկությունների

NN	Առաջարկող	Առաջարկության բովանդակություն	Նշում առաջարկի ընդունման մասին
1	ՀՀ ԱԺ պատգամավորներ Ա. Նռանյան Ա. Մինասյան	ՀՀ կենտրոնական բանկում գրանցվող կազմակերպությունների նկատմամբ ևս կիրառել ՀՎՀՀ ստանալու լիազոր մարմիններում հաշվառման կանգնելու միևնույն եղանակը, այսինքն Կենտրոնական բանկում գրանցվող կազմակերպությունների գրանցում ստանալու պահին նույնպես ստանում են ՀՎՀՀ, ինչպես նաև համարվում հաշվառված հարկային և սոցիալական ապահովության լիազոր մարմիններում:	Ընդունվել է, «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի առաջին հոդվածը՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստացած կազմակերպությունները և հաշվառված անհատ ձեռնարկատերերը գրանցում (հաշվառում) ստանալու պահից համարվում են հաշվառված հարկային տեսչությունում, իսկ ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված կազմակերպությունները սահմանված կարգով գրանցում ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր են հաշվառման կանգնել հարկային տեսչությունում եւ ստանալ հարկ վճարողների հաշվառման համարներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:», փոփոխվել է և շարադրվել

			հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում ստացած կազմակերպությունները և հաշվառված անհատ ձեռնարկատերերը, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից գրանցված կազմակերպությունները գրանցում (հաշվառում) ստանալու պահից համարվում են հաշվառված հարկային տեսչությունում:»: :
2	ՀՀ կառավարություն	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.1-րդ հոդվածում՝ 1) 2-րդ կետը «կազմակերպությունների» բառից հետո լրացնել «և անհատ ձեռնարկատերերի» բառերը. 2) 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝ «Սույն հոդվածով սահմանված եղանակով և ժամկետներում հաշվարկը, հայտարարագիրը կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթուղթը հարկային մարմին չներկայացնելն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով և սույն օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն:»:	Ընդունվել է
3	ՀՀ կառավարություն	Հաշվի առնելով, որ օրենքի ընդունմամբ պայմանավորված անհրաժեշտ է ընդունել տեղեկատվության փոխանակման հարցերը կարգավորող իրավական ակտեր և մի շարք գործող իրավական ակտերում կատարել փոփոխություններ, ինչպես նաև ծրագրային ապահովման խնդիրները լուծել, առաջարկվել է օրենքի ուժի մեջ մտնելը հետաձգել երեք ամսով՝ 01.04.2011թ:	Ընդունվել է